

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Հաշվետու ժամանակաշրջան՝ 2009 թ 1-ին եռամսյակ

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ

«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալի (հինգ հարյուր միլիոն ՀՀ դրամի) 450 մլն դրամին համարժեք բաժնեմասը (90%) պատկանում է «ՌԵԳԻՈՆ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ ՓԲԸ-ին, իսկ մնացած 50 մլն դրամին համարժեք բաժնեմասը (10%)՝ Էդուարդ Արաբխանյանին (վերջինս մահացել է 2007 թվականի օգոստոսի 11-ին, բայց մինչև օրս ժառանգորդը չի ճանաչվել):

20.10.2004 թ-ին Ընկերությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստացել է ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա, իսկ 11.03.2008 թվականին Ընկերությունը վերագրանցվել և վերալիցենզավորվել է ՀՀ կենտրոնական բանկում՝ ստանալով ոչ կյանքի ապահովագրության իրականացման թիվ 0002 (0043) լիցենզիան:

Ընկերության գտնվելու վայրն (փոստային հասցեն) է՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 8:

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերությունն ապահովագրական գործունեություն է իրականացրել հետևյալ ապահովագրության դասերի (դասային խմբերի) գծով՝

- Ցամաքային ավտոտրանսպորտի ապահովագրություն,
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
- Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
- Աջակցության ապահովագրություն,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- Հրդեհից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն:

2009 թվականի մարտի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 35 աշխատակից:

Կորպորատիվ կառավարում

Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքներ: 31.03.2009թ. դրությամբ Ընկերությունն ունի 5 անդամից բաղկացած խորհուրդ: Հստակ տարանջատված են Ընկերության Խորհրդի, գործադիր մարմնի գործառնությունները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունն ունի ներքին աուդիտի ստորաբաժանում և պատասխանատու ակտուար:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է հիմք ընդունելով ապահովագրական համակարգի հաշվապահական հաշվառումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները և Ընկերության խորհրդի 20.03.2007 թվականի որոշմամբ (թիվ 005 արձանագրություն) հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որն իրենից ներկայացնում է հաշվապահական հաշվառման վարման մի շարք կանոնների և սկզբունքների ամբողջություն, որոնցից են առաջնային հսկողությունը, ընթացիկ խմբավորումը և տնտեսական գործունեության ցուցանիշների վերջնական արդյունքի ընդհանրացումը:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվապահական հաշվառման գործընթացների ներդրման և կազմակերպման յուրաքանչյուր առանձին ուղղվածությամբ հիմնվում է օրենսդրությամբ սահմանված և հաշվառման նորմատիվային կարգավորման իրավական համակարգում ամրագրված կամ իրավական ակտերով թույլատրված մեթոդների և եղանակների վրա:

ա) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կիրառվել է Ընկերության կողմից որդեգրված և ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվի առնելով ՀՀՀՀՄ 1-ով ամրագրված սկզբունքները:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ դրամական միջոցների շարժը ներկայացնող հաշվետվության, ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» ՀՀՀՀՄ 7-ի սկզբունքների հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունների արժեքների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը: Արժեքների թվաբանական մեծությունները ներկայացվել են հազար

դրամներով: Արտարժույթով ներկայացված ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքները:

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվները և պարտավորությունները հաշվանցվել և գուտ գումարը ներկայացվել է հաշվապահական հաշվեկշռում, երբ եղել է ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադրություն կամ հաշվարկն իրականացվել է գուտ հիմունքով կամ իրացվել է ակտիվը և մարվել պարտավորությունը միաժամանակ:

Հաշվանցումները ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են հետևյալ դեպքերում՝

1) ակտիվների օտարումից, վաճառքից ստացված հասույթներից հանվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը և օտարման հետ կապված համապատասխան ծախսերը՝ ցույց տալով գուտ շահույթ կամ վնաս (վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարում, հիմնական միջոցների օտարում),

2) արտարժույթային ակտիվների վերագնահատումից առաջացած շահույթները և վնասները ցույց են տրվում գուտ հիմունքով:

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության կողմից պահպանվել են անընդհատության, ներկայացման հետևողականության, էականության, համադրելիության սկզբունքները:

բ) Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

«Հասույթ» ՀՀՀՀՄ 18-ի սկզբունքների հիման վրա են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում Ընկերության եկամուտների և ծախսերի հաշվառումը: Եկամուտները և ծախսերը ներկայացվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, Ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հասույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերությունն իր հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարում ապահովագրության պայմանագիրը (վկայագիրը): Ապահովագրության պայմանագրի (վկայագրի) հետագա փոփոխություններն իրականացվում են ապահովագրության պայմանագրի (վկայագրի) անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի (լրացումների) միջոցով:

Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողին հաշվեգրված վերաապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող պարտավորությունները Ընկերության կողմից ճանաչվում են դրանց փաստացի փոխանցման ժամանակ՝ բացառությամբ վերաապահովագրողին փոխանցվելիք ապահովագրավճարների և նրանից ստացվելիք գումարների գծով հաշվանցման դեպքերի:

գ) Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Ընկերության կողմից արտարժույթային փոխարժեքային տարբերությունները հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՀՀՄ 21-ի սկզբունքների հիման վրա:

Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով՝ արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա փոխարժեքը:

Հաշվապահական հաշվեկշիռը կազմելու ամսաթվի դրությամբ՝

1) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը,

2) արտարժույթով սահմանված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում և ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Դրամային հոդվածների վերագնահատումը ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով կատարվում է յուրաքանչյուր անգամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթների հաշվարկային փոխարժեքները սահմանելիս:

դ) Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Ընկերության կողմից շահութահարկը հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել է «Շահութահարկ» ՀՀՀՀՄ 12-ի սկզբունքների հիման վրա:

Շահույթի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված միավորներին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինեն հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ապագա ժամանաշրջաններում բյուջեի վճարման (բյուջեից փոխանցման) ենթակա շահութահարկի գումարն է՝ կապված՝

ա) ժամանակավոր տարբերությունների, որը իրենից ներկայացնում է ակտիվի (պարտավորության) հաշվեկշռային և հարկային արժեքների տարբերությունը, կամ

բ) չօգտագործված հարկային վնասը և (կամ) զեղչերը հաջորդ ժամանաշրջաններ տեղափոխելու հետ:

Հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում հարկվող շահույթի ստացման, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները կամ հարկային վնասը:

ե) Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական գործիքների, մասնավորապես վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի հիման վրա, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց համար բացակայում է իրական արժեքի վստահելի չափման միավոր: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվել են ամորտիզացված կամ սկզբնական արժեքով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն Ընկերությունը ճանաչում է դրանք գնելու իր պարտավորության պահից: Այս պահից ի վեր ճանաչվում են այս ակտիվների իրական արժեքների փոփոխման հետևանքով առաջացած եկամուտները և ծախսերը:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները ճանաչվել են Ընկերությանը փոխանցման պահից:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ չափվել են իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրա դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընկերության կողմից վաճառքի համար մատչելի արժեթղթերը վերագնահատվում են՝ ներկայացվելով իրական արժեքով: Արժեթղթերի գնի ճշտումները իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքների հիման վրա: Վերագնահատման արդյունքները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում՝ եկամուտների և ծախսերի բաժնում:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները վաճառքի դեպքում ապաճանաչվում են, և գնորդից ստացվելիք համապատասխան գումարները ճանաչվում են այն օրվա դրությամբ, երբ Ընկերությունը պարտավորվել է վաճառել այդ ակտիվները:

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերության հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մտո ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

զ) Դրամական միջոցներ ու դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները:

է) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Մաշվածությունը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը կամ մաշվածության հաշվարկման օգտագործվող դրույքաչափերը հետևյալներն են՝

<i>համակարգչային ծրագրեր</i>	<i>5 տարի</i>
<i>լիցենզիաներ և վստահագրեր</i>	<i>1 տարի</i>

Ծանոթագրություն 3. Գրամական միջոցներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության գրամական միջոցները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Կանխիկ գրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1 310	399
Բանկային հաշիվներ՝ ռեզիդենտ բանկերում	295 840	27 299
Բանկային հաշիվների հնարավոր կորուստների պահուստ	(2 958)	(273)
Ընդամենը	294 192	27 425

Ծանոթագրություն 4. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ

31.03.2009թ-ի դրությամբ ապահովագրության գծով ստացվելիք գումարներ՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից)	18 071	459
Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերաապահովագրողների նկատմամբ	-	-
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ռեզիդենտների նկատմամբ	9 005	5 271
Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտ անձանցից	162	153
Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(1 302)	(297)
Ընդամենը	25 936	5 586

Ծանոթագրություն 5. Ընթացիկ ավանդներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ընթացիկ ավանդները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ընթացիկ ավանդներ ռեզիդենտ բանկերում	639 542	284 976
Ընթացիկ ավանդների հնարավոր կորուստների պահուստ	(6 396)	(2 850)
Ընդամենը	633 146	282 126

Ծանոթագրություն 9. Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր

31.03.2009թ-ի դրությամբ մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր արժեքնր կազմում է՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	-	83 000
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գեղչատոկոս	-	(280)
ՀՀ պետական արժեթղթեր (կարճաժամկետ պարտատոմսեր)	87 400	-
ՀՀ պետական արժեթղթերի (կարճաժամկետ պարտատոմսերի) գեղչատոկոս	(5 936)	-
Ընդամենը	81 464	82 720

Ծանոթագրություն 10. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության դեբիտորական պարտքերը և կանխավճարները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին	99	118
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով	2 699	2 163
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(26)	(23)
Ընդամենը	2 772	2 258

Ծանոթագրություն 11. Ստացվելիք տոկոսներ՝ ընթացիկ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ստացվելիք տոկոսները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով	9 283	11 202
Ընդամենը	9 283	11 202

Ծանոթագրություն 12. Այլ ընթացիկ ակտիվներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության այլ ընթացիկ ակտիվները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ	1 396	1 318
Ընթացիկ այլ ակտիվներ (վկայագրերի ձևաթղթեր)	206	298
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ	(15)	(13)
Ընդամենը	1 587	1 603

Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

ա) Հիմնական միջոցներ

(2009 թվականի 1-ին եռամսյակ)

	Շեն-քեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց. գծով կապիտալ ներդր.	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալ ներդր.	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	0	6 282	0	6 871	0	0	13 583
Ավելացում	0	7	0	0	0	0	7
Օտարում		0	0	0	0	0	0
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	0	6 729	0	6 871	0	0	13 600
Ավելացում	0	0	0	145	0	0	145
Օտարում	0	0	0	0	0	0	0
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	0	6 729	0	7 016	0	0	13 745
Կուտակված մաշվածություն							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	0	5 273	0	4 257	0	0	9 530
Ավելացում	0	592	0	379	0	0	971
Օտարում		0	0	0	0	0	0
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	0	5 865	0	4 636	0	0	10 501
Ավելացում	0	358	0	379	0	0	737
Օտարում	0	0	0	0	0	0	0
Վերագնահատում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	0	6 223	0	5 015	0	0	11 237
Չուտ հաշվեկշռային արժեք							
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	0	506	0	2 001	0	0	2 508

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	0	864	0	2 235	0	0	3 099
---------------------------------------	---	-----	---	-------	---	---	-------

բ) Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալներ	Ընդամենը
--	-----------------------	--------------------------	-------------------------	---------------------------	-------------------------------------	----------

Սկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	1 360	2 800	0	0	0	3 860
Ավելացում	4 200	0	0	0	0	4 200
Օտարում	0	2 800	0	0	0	2 800
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	5 560	0	0	0	0	5 560
Ավելացում	0	0	0	0	0	0
Օտարում	0	0	0	0	0	0
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	5 560	0	0	0	0	5 560

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	468	0	0	0	0	2 760
Ավելացում	68	0	0	0	0	68
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	536	0	0	0	0	536
Ավելացում	278	0	0	0	0	814
Օտարում						
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ժգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	814	0	0	0	0	814

Չուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	4 746	0	0	0	0	4 746
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	5 024	0	0	0	0	5 024

Ծանոթագրություն 14. Ոչ ընթացիկ ավանդներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ոչ ընթացիկ ավանդները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ ընթացիկ ավանդներ ռեզիդենտ բանկերում	160 339	637 000
Ոչ ընթացիկ ներդրումների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ	(1 603)	(6 370)
Ընդամենը	158 736	630 630

Ծանոթագրություն 19. Ստացվելիք տոկոսներ՝ ոչ ընթացիկ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ստացվելիք տոկոսները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի	Նախորդ տարվա վերջի դրությամբ
--	----------------------------------	------------------------------

	վերջի դրությամբ	
Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդների գծով	365	35 047
Ընդամենը	365	35 047

Ծանոթագրություն 22. Ապահովագրության գծով վճարվելիք գումարներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ապահովագրության գծով վճարվելիք գումարները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումներ	2 723	7 575
Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) հետ վերադարձվող ապահովագրավճարներ	253	351
Ընդամենը	2 976	7 926

Ծանոթագրություն 23. Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ապահովագրության գծով վճարվելիք գումարները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	6 943	20 055
Ընդամենը	6 943	20 055

Ծանոթագրություն 26. Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության չվաստակաձ ապահովագրավճարների պահուստը կազմում է՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ռեզիդենտների գծով	154 236	210 968
Ոչ ռեզիդենտների գծով	372	548
Ընդամենը	154 608	211 516

Ծանոթագրություն 27. Պահանջների (վնասների) պահուստ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության պահանջների (վնասների) պահուստը կազմում է՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	16 621	25 146
Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	13 449	13 449
Ընդամենը	30 070	38 595

Ծանոթագրություն 30. Այլ վճարվելիք գումարներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության այլ վճարվելիք գումարները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	79 770	40 655
Կրեդիտորական պարտքեր այլ հարկի գծով	-	47
Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր	7 383	7 046
Ընդամենը	87 153	47 748

Ծանոթագրություն 31. Այլ ընթացիկ պարտավորություններ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության այլ ընթացիկ պարտավորությունների գումարները կազմում են՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով	1 029	1 071

Պահուստներ (պայմանական պարտավորությունների գծով)	120	90
Այլ ընթացիկ պարտավորություններ	11 681	12 918
Ընդամենը	12 830	14 079

Ծանոթագրություն 37. Կանոնադրական կապիտալ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության հայտարարված և համարված կանոնադրական կապիտալը կազմում է 500 000 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 450 000 000 և 50 000 000 անվանական արժեքներով երկու բաժնեմասերից:

Ծանոթագրություն 39. Գլխավոր պահուստ

Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 %-ի չափով: Այս հիմնադրամի ձևավորումն իրականացվում է Ընկերության տարեկան գուտ շահույթից կատարվող մասհանումների միջոցով՝ մինչև կանոնադրական կապիտալի 15% չափին հասնելը: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը չպետք է պակաս լինի Ընկերության տարեկան գուտ շահույթի 5%-ից:

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության գլխավոր պահուստը կազմում է՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Գլխավոր պահուստ	778	778

Ծանոթագրություն 41. Չբաշխված շահույթ (վնաս)

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության չբաշխված շահույթը (վնասը) կազմում է՝

	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ընթացիկ տարվա շահույթ	173 354	231 233
Նախորդ տարիների չբաշխված շահույթ	246 023	14 789
Ընդամենը	419 377	246 023

Ծանոթագրություն 43. Եկամուտներ ապահովագրավճարներից

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության ապահովագրավճարներից եկամուտները կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ կյանքի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ	63 140	135 214
Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ	0	974
Ընդամենը	63 140	136 188

Ծանոթագրություն 46. Եկամուտներ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներից

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով եկամուտ	1 779	41

Ծանոթագրություն 47. Եկամուտներ սուբրոգացիայից

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ կյանքի ապահովագրության գծով սուբրոգացիայի հետևանքով ռեզիդենտների նկատմամբ առաջացած պահանջներից եկամուտ	4 200	304

Ծանոթագրություն 48. Այլ եկամուտներ

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ կյանքի ապահովագրության գծով այլ եկամուտներ ռեզիդենտներից	84	-

Ոչ կյանքի ապահովագրության գծով այլ եկամուտներ ոչ ռեզիդենտներից	749	20
Ընդամենը	833	20

Ծանոթագրություն 55. Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Եկամուտ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից	563 445	747 292

Ծանոթագրություն 56. Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստի հակադարձումից

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Եկամուտ պահանջների (վնասների) պահուստի հակադարձումից	49 758	49 624

Ծանոթագրություն 59. Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով	98 751	-

Ծանոթագրություն 60. Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով	9 166	-

Ծանոթագրություն 63. Հատուցումներ ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումներ	20 059	17 452

Ծանոթագրություն 66. Ծախսեր ապահովագրական միջնորդների գծով

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր	3 756	-

Ծանոթագրություն 67. Ծախսեր վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր	16 559	3 736

Ծանոթագրություն 68. Այլ ծախսեր

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացում Ընկերության այլ ծախսերը կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վերադարձվող գումարներ դադարեցված պայմանագրերի գծով	2 282	2 401
Ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվելիք այլ գումարներ (վնասների գնահատման և փորձագիտության համար կատարվող ծախսեր)	20	170
Ընդամենը	2 302	2 571

Ծանոթագրություն 75. Ծախսեր չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձևավորման գծով

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության ծախսերը չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով	603 861	778 227
Չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով	1 427	2 326
Ընդամենը	605 288	780 553

Ծանոթագրություն 76. Ծախսեր պահանջների (վնասների) պահուստի ձևավորման գծով

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության ծախսերը պահանջների (վնասների) պահուստի ձևավորման գծով կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների ձևավորման գծով	27 783	50 445
Տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր	13 449	7 281
Ընդամենը	41 232	57 726

Ծանոթագրություն 79. Ներդրումներից ստացվող տոկոսային եկամուտներ

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության ներդրումներից ստացվող տոկոսային եկամուտները կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով	17 409	14 581
Տոկոսային եկամուտներ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերից	280	-
Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերից	1 520	228
Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերից	-	-
Տոկոսային եկամուտներ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններից	-	1 137
Ընդամենը	19 209	15 946

Ծանոթագրություն 87. Այլ եկամուտներ

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության այլ եկամուտները կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ	139 661	32
Այլ եկամուտներ	305	157
Ընդամենը	139 966	189

Ծանոթագրություն 88. Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին զուտ հատկացումներ

31.03.2009թ-ի դրությամբ Ընկերության ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին կատարված հատկացումները կազմել են՝ **2 505 հազար դրամ**։

Ծանոթագրություն 89. Ընդհանուր վարչական ծախսեր

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության ընդհանուր վարչական ծախսերը կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ծախսեր անձնակազմի գծով	21 922	12 839
Կառավարչական ծախսեր	5 982	4 901
Ընդամենը	27 904	17 740

Ծանոթագրություն 90. Այլ ծախսեր

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության այլ ծախսերը կազմել են՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Հասարակական կապերի գծով ծախսեր	169	333
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	736	557
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	278	1 110
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր	3 652	82
Այլ ծախսեր	45	1 787
Ընդամենը	4 880	3 869

Ծանոթագրություն 91. Շահութահարկի գծով ծախս

2009 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության շահութահարկի գծով ծախսը կազմում է՝

	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)	43 318	13 192
Հետսաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	(78)	0
Ընդամենը	43 240	13 192

Ծանոթագրություն 93. Արտահաշվեկշռային հաշիվներ

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ	42 859	42 859
Որպես գրավ պահվող ակտիվներ		
Պայմանական պարտավորություններ	9 000	12 000
Հարկային հաշվառման նպատակով դուրս գրված դեբիտորական պարտքեր	9 623	9 623
Հարկային հաշվառման նպատակով դուրս գրված կրեդիտորական պարտքեր		
Չհատուցված հարկային վնաս		
Գրավադրված ակտիվներ		4 045
Խիստ հաշվառման բյանկեր	1 320	842
Պարբերական և մասնագիտական գրականություն		
Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ		
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	36 888 143	44 297 595
Կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ		

«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ

Գործադիր տնօրենի ժ/պ`

Գլխավոր հաշվապահ`

Հովհաննես Գևորգյան

Մարինա Այվազյան